ԴԱՎ. ԼՈՒՐՅԵ

ԱԶ ԹԱՓԹՓՈՒԿՆԵՐԸ ՅԵՎ „ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՄԵԶ ԿՈՒԼԱԿԻ ՆԵՐԱՃԵԼՈՒ“ ՆՐԱՆՑ ԹԵՈՐԻԱՆ

ՀԱՅԿՈՒՍԶՐԱՏ • 1937

Պրոլետարներ բոլոր յերկիրների, միացե՛ք

ԴԱՎ. ԼՈՒՐՅԵ

ԱՋ ԹԱՓԹՓՈՒԿՆԵՐԸ ՅԵՎ «ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՄԵՋ ՈՒԼԱԿԻ ՆԵՐԱՃԵԼՈՒ» ԸՐԱՆՑ ԹԵՈՐԻԱՆ

Ա 24842

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԵՐԵՎԱՆ • 1937 • ԵՐԵՎԱՆ

ДАВ. ЛУРЬЕ

ПРАВЫЕ ОТЩЕПЕНЦЫ И ИХ ТЕОРИЯ «ВРАСТАНИЯ КУЛАКА В СОЦИАЛИЗМ»

Армпартиздат, Ереван, 1937

Թարգմ. Հ. Գրիգորյան
Խմբ. Ս. Կիրակոսյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Վ. Ջիդեջյան
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արովյան

Գլավլիտի լիազոր Ի—4896, հրատ. 466,
Պատվ. № 121, տիրաժ 10.000
Հանձնված է արտադրության 7/VII 1937 թ.
Ստորագրված է տպագրելու 2/VIII 1937 թ.
ԳԻՆԸ 15 կ.
Հայկուսհրատի տպարան, Ցերևան,
Աղասվերդյան № 71

Ընկեր Ստալինը Համկ(բ)Կ ԿԿ-ի վերջին պլենումում ասում էր.

«Հիմա, յես կարծում եմ, բոլորի համար պարզ է, որ այժմյան վնասարարներն ու դիվերսանտները, ինչպիսի դրոշակով էլ թեկուզ դիմակավորվեն նրանք, տրոցկիստական թե բուխարինյան, վաղուց արդեն դադարել են բանվորական շարժման մեջ քաղաքական հոսանք լինելուց, որ նրանք դարձել են պրոֆեսիոնալ վնասարարներ, դիվերսանտներ, լրտեսներ, մարդասպաններ, անսկզբունք ու գաղափարազուրկ մի բանդա: Հասկանալի յե, որ անհրաժեշտ է անողոքաբար ջախջախել ու արմատախիլ անել այդ պարոններին որպես բանվոր դասակարգի թշնամիների, որպես մեր հայրենիքի դավաճանների»:

Այս բոլոր զզվելի, գարշելի բուխարինականները, ռիկովականները մերկացված են միևնույն բանդայի մեջ տրոցկիստների հետ, ճապոն-գերմանական լրտեսների, վնասարարների, դիվերսանտների ու մարդասպանների բանդայի մեջ: Ի վառս իրենց ֆաշիստական տերերի հակախորհրդային տրոցկիստական-աջ յերկերեսանիները դիմում էին ամենագարշելի, ամենաստոր գործողությունների:

Ընկեր Մոլոտովը «Ճապոն-գերման-տրոցկիստական գործակալների վնասարարության, դիվերսիայի և լրտեսության դասերը» իր հոդվածում մեջ է բերում վնասարար Ցակովլեվի ցուցմունքները, որն իր ժամանակին, Մոսկվայի կոմիտեյի ուղղանության ղեկավարության որով, Խամովնիկիի շրջկոմի քարտուղարն էր: Այս աջ բանդիտը, վերջին ժամանակները Զելյաբինսկի ելեկտրո-մետալուրգիական կոմբինատի պետը լինելով, ամեն կերպ փորձում էր արտադրությունը կազմալուծել, ամենաար-

ժեքավոր դաշդյահները շարքից հանել, բանվորներին դաղափեց-նել, նրանց մեջ համաձարակային հիվանդություններ տարածել։ Այսպես է աջ հերձվածողների—սոցիալիզմի լիսի թշնամիների—նողկալի կերպարանքը։

* * *

Կուսակցության բոլոր թշնամիներն աշխատում էին լենինյ ռեստավրատորական ձգտումները դրեստավորել «թեորիական» դատողություններով, որոնք ուղղված են Մարքսի—Ենգելսի—Լենինի—Ստալինի միակ հեղափոխական թեորիայի դեմ։ Հրաշալի կերպով հասկանալով, որ լենինիզմն ամենավստահելի զենքն է կուսակցության ձեռքին, ստոր դավաճանները կատաղորեն հարձակվում էին լենինյան թեորիայի վրա։ Այսպես, անարդ տրոցկիստներն ու զինովյեվականները, ավանտյուրիստական լիսի «ճախ» ֆրազով քողարկվելով, առաջ մղեցին մեկ, առանձին վերցրած յերկրում սոցիալիզմ կառուցելու անհնարինության թեորիան։ Տրոցկիստական թեորիան նշանակում եր, որ պայքարելու կարիք չկա, որ մենք հաղթել չենք կարող, որ բանվոր դասակարդն իվիճակի չէ դյուղացիությանը սոցիալիստական ուղիով տանելու և այդ պատճառով մնում է միայն զենքը վայր դնել կապիտալիզմի անխուսափելի վերականդնման առաջ։ Կապիտուլանտական այս թեորիան դաղափարապես զինաթափ եր անում բանվոր դասակարդին և հակախորհրդային տարրերի ձեռքը զենք եր տալիս կուսակցության դծի դեմ պայքարելու համար։ Ղեկավարվելով բուրժուական այդ թեորիայով, տրոցկիստները շատ շուտով փոխարկվեցին հակահեղափոխական բուրժուազիայի առաջավոր ջոկատի, իսկ ավելի ուշ, մեր յերկրում սոցիալիզմի մեծ հաղթանակների տարիներին, այլասերվեցին ու դարձան ճապոն-դերմանական լրտեսների, դիվերսանտների, վնասարարների ու տեռորիստների բանդիտական ջոկատը։

Կապիտուլանտական, հակահեղափոխական մյուս թեորիան, որն ուղղված եր դեպի բանվոր դասակարդը նրան զինաթափելու,—այդ դասակարդային պայքարի մարման և սոցիալիզմի մեջ կուլակի խաղաղ ներաճման բուխարինյան աջ-ոպորտունիստական «թեորիան» եր։

Բուխարինի ահտիբոլշևիզմն իր պատմությունն ունի։ Բուխարինը վաղուց, դեռ մինչհեղափոխական ժամանակներում,

քարոզում էր մարքսիզմ–լենինիզմի հետ ընդհանուր վոչինչ չունեցող թեորիաներ։ Լենինը բազմիցս հարվածել է նրան այդ բանի համար։

Բուխարինը մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը զարգացնում էր պետության «պայթեցման» կիսաանարխիստական թեորիան, վորը հանդգնություն ունեցավ հետագայում մեկնաբանել վորպես կուսակցում սոցիալիստական հեղափոխության ընթացքում բուրժուական պետական մեքենայի փչեցման լենինյան թեորիայի։ Բուխարինը գնդակահարված վիժվածքանդիտ Պյատակովի հետ միասին մոլեգին հանդես էր գալիս Լենինի դեմ 1918 թվին (դիսկուսիա Բրեստի հաշտության մասին) և բլոկ էր կազմում Տրոցկու հետ 1921 թվին (դիսկուսիա արհմիությունների մասին)։ Ավելի ուշ այս հակարոլշևիկյան «թեորետիկը» դարձավ սոցիալիստական շինարարությանը ցույց տրվող բուրժուա–կուլակային դիմադրության խոսափողը, ստեղծելով իր աջ–ոպորտունիստական թեորիան։

Դեռ 1923 թվին Բուխարինը մի քիչ քողարկված ձևով հանդես էր գալիս կապիտուլանտական հայտարարություններով, վորոնք հետագայում նրա կողմից զարգացված են լբրև սոցիալիզմի մեջ կուլակի ներառման «թեորիա»։

«Վորքան ավելի արագ է կարդի ընկնում տնտեսական կյանքը, այնքան ավելի արագ է պրոլետարիատը ձուլում դյուղացիությանը, և դյուղացիական տնտեսությունն եվոլուցիոն ճանապարհով (չրջանառության պրոցեսի, պետվարկի, կոոպերացիայի միջոցով և այլն) կամաց–կամաց «ներառնում է» հասարակության համասոցիալիստական կազմակերպության մեջ»։

Այսպիսով, Բուխարինը կուլակին միացնում էր դյուղացիության չքավոր–միջակ մասսաներին և ուղում էր ընջել դասակարգային կռիվը։ Մեր զարգացման բեկման մոմենտին, առաջին հնգամյակի նախորյակին, բուխարինյան այս թեորիան դարձավ կուսակցության դեմ հանդես յելած աջ ոպոզիցիայի դրոշակը։

Խոսքով ընդունելով սոցիալիստական հասարակության կառուցման հնարավորությունը մեր յերկրում, աջ ոպոզիցիան իրականում գլորվում էր դեպի այն մեթոդների լիակատար մերժումը, վորոնք անհրաժեշտ են սոցիալիզմի կառուցման համար։ Այս պատահեց այն պատճառով, վոր Բուխարինը բացեիբաց հրաժարվեց դասակարգային պայքարի մարքսիստական–լենինյան ուսմունքից։ Նա հայտարարում էր, վոր բանվոր դասակարգի

դիկտատուրայի հաստատումից հետո դասակարգային պայքարն անխուսափելիորեն պետք է մարի ընդհուպ մինչև իր լիակատար չքացումը: Այսպիսով, ամբողջ եկոնոմիկան և յերկրի ամբողջ կյանքը սոցիալիզմի ուղղությամբ վերակառուցելու վիթխարի խնդիրն, ըստ Բուխարինի, պետք է կատարվի առանց դասակարգային կռվի կամ գոնե այդ կռվի մշտական մարման պայմաններում:

Բուխարինը դեռ 1925 թվին գրում եր, վոր յեթե վորևե տեղ մեր յերկրում նկատվում է դասակարգերի կռվի սրում, կալիտալիստական տարրերի դիմադրության սրում, ապա այս բանում մեղավոր են... մեր կազմակերպությունները, կուսակցական ու խորհրդային, վորոնք, իբր թե, անճիշտ քաղաքականություն են վարում: Իբր թե բավական է միայն բարելավել մեր ապարատը, նրան սովորեցնել կանոնավոր աշխատել,—և կուլակների ու նեպմանների դիմադրությունն ինքնըստինքյան կվերանա, նրանք, վորպես հեղաբարո վոչխարիկներ, սիրով կհետևեն խորհրդային իշխանության բոլոր նախաձեռնություններին:

Ըստ Բուխարինի դուրս եր գալիս, թե քանի վոր հրամանատարական բարձունքներն աղդայնացված արդյունաբերության, տրանսպորտի, բանկերի, հողի կերպարանքով խորհրդային պետությանն են պատկանում, ապա մնացած ամեն ինչն ինքնըստինքյան կկատարվի: Այստեղից բղխում եր աջ-ոպորտունիստական թեորիան և ինքնահոսի պրակտիկան: Իբր թե չպետք է դիմել վորևե հատուկ ջանքերի, հարկավոր չէ մոբիլիզացիայի յենթարկել կուսակցության մարտունակությունը, հարկավոր չէ պայքարել շահագործողական դասակարգերի դեմ, վորովհետև ամեն ինչ արդեն արված է—մնացել է միայն պառկել կողքի վրա:

Այս դռեհիկ հակախորհրդային թեորիան նշանակում եր կապերի խզում մարքսիզմի-լենինիզմի հիմունքների հետ, իրապես հրաժարում դասակարգերի վոչնչացումից, սոցիալիզմի կառուցումից: Այս նույնպես ամենալիակատար հրաժարումն եր նաև բանվոր դասակարգի դիկտատուրայից, վորովհետև այդ դիկտատուրայից վոչինչ չի մնա, յեթե դեն դցենք շահագործողական դասակարգերի դեմ կռվելու խնդիրն ու սոցիալիզմի կառուցումը, յեթե դեն դցենք բանվոր դասակարգի ղեկավար դերը գյուղացիության հետ կապած նրա դաշինքի մեջ:

Բուխարինի ստոր պնդումներն իրենցից ներկայացնում եյին

հենց այն ոպորտունիստական գաղրելիությունը, վորը դեռ ենգելսն էր բնութագրում վորպես հին խոզուրության «խաղաղ-հանգիստ-ազատ-ուրախ «ներաճումը» «սոցիալիստական հասարակության» մեջ»[1]:

Պաշտպանելով կուլակային կոոպերատիվ բները, պայքարելով կուլակային տնտեսությունների ծաղկման համար, Բուխարինը կատաղորեն հարձակվում էր կոլեկտիվացման դեմ: Նա համաձայնում էր կոլեկտիվացումը ճանաչել թերևս միայն չքավորների համար: Իսկ միջակների համար, նրա կարծիքով, բավական էր հասարակ կոոպերացումը շրջանառության վոլորտում (վարկ, մատակարարում, վաճառահանում): Բուխարինն ու նրա անարդ խումբը հրաժարվում էին կոլեկտիվացման բազայի վրա գյուղացիական տնտեսության սոցիալիստական վերակառուցման մեծ գործից: Նրանք անխղճորեն սոցիալիզմի պիտակ էին փակցնում վոչ միայն մանր, չվերակառուցված գյուղացիական տնտեսության, այլև կապիտալիստների և կուլակների վրա:

* * *

«Սոցիալիզմի մեջ կուլակի ներաճման» թեորիայի հակահեղափոխական դավաճանական բնույթի ամբողջ խորությունը հասկանալու համար հարկավոր է վերհիշել այն պատմական իրադրությունը, վորի մեջ նա առաջ յեկավ, և դասակարգային այն իրական կռիվը, վորն այն ժամանակ տեղի յեր ունենում մեր յերկրում:

1925 թվականը, յերբ Բուխարինը հանդես յեկավ իր ռեստավրատորական թեորիայով, վերականգնման ժամանակաշրջանի վերջին տարին եր:

Ցերկրի սոցիալիստական ինդուստրացման լոզունգը, վորն առաջ եր քաշել ընկեր Ստալինը կուսակցության XIV համագումարում 1925 թվի վերջին, պատմական նոր շրջան բաց արեց ԽՍՀՄ զարգացման մեջ: Ինդուստրիայի և ամենից առաջ արտադրամիջոցների ամբողջ արտադրության աճումն ամբողջ ժողովրդական տնտեսության բարձրացման և յերկրի տնտեսական ինքնուրույնության ապահովման կարևորագույն, վճռական պայմանը դարձավ:

---

[1] *Կ. Մարքս* և *Ֆ. Էնգելս*, Письма, եջ 303:

Կուսակցության XV համագումարը (1927 թ. դեկտեմբեր) նշելով հետագա քայլերը յերկրի սոցիալիստական ինդուստրացման ասպարեզում, կուսակցության՝ գյուղում վարած քաղաքականության կարևորագույն խնդիր հայտարարեց աստիճանական անցումը դեպի կոլեկտիվացում: Այդ ժամանակի մոտերքը կուլակությունը գյուղում փոքր ինչ աճեց և արտադյուղական ապրանքային հացի բավական զգալի մասի (20 տոկոս) տեր եր: Կուսակցության XV համագումարը վորոշում ընդունեց կուլակի վրա ավելի վճռական հարձակում գործելու մասին, հողի վարձակալության և բանվորներ վարձելու իրավունքը կրճատելու մասին:

Հացի և գյուղատնտեսության ապրանքային ուրիշ արտադրանքի պահանջը տարեցտարի ավելանում եր, վորովհետև աճում և ամրանում եր ինդուստրիան, ավելանում եյին բանվոր դասակարգի կադրերը, աճում եյին քաղաքների բնակչության թիվն ու նրա նյութական բարեկեցությունը:

Արդեն կուսակցության XV համագումարում ընկեր Ստալինն իր զեկուցման մեջ մատնանշեց գյուղատնտեսության աճման տեմպի դանդաղությունը՝ համեմատած մեր սոցիալիստական արդյունաբերության հետ: Նա մատնանշեց նաև այդ յերևույթի պատճառները—գյուղացիական տնտեսության մանր ու մասնատված բնույթը: Այս պայմաններում գյուղատնտեսությունն իսկական չեր ռացիոնալ կերպով կիրառելու ագրոտեխնիկան ու մեքենաները:

Ահա թե ինչպես ձևակերպեց ընկեր Ստալինը 1929 թ. ապրիլին, գյուղատնտեսության կոլեկտիվացման ժամանակաշրջանն սկսելու նախորյակին, ստեղծված հակասությունները.

«Մենք վերազինում ենք և մասամբ արդեն վերազինել ենք մեր արդյունաբերությունը, նրան քաշելով տեխնիկական նոր բազայի վրա, նրան նոր բարելավված մեքենաներ, նոր բարելավված կադրեր մատակարարելով: Մենք նոր գործարաններ ու ֆաբրիկաներ ենք կառուցում, մենք վերակառուցում ու ընդարձակում ենք հները, մենք զարգացնում ենք մետաղագործությունը, քիմիան, մեքենաշինությունը: Այս հիմքի վրա աճում են քաղաքներ, բազմանում են նոր արդյունաբերական կենտրոններ, ընդլայնվում են հները: Այս բազայի վրա աճում է պարենային մթերքների, արդյունաբե-

բության համար հարկավոր հումքի պահանջը: Իսկ գյուղատնտեսությունը մնում է իր հին գործիքներով, հողի մշակության հին, պալեենական մեթոդներով, հին, պրիմիտիվ, այժմ արդեն անպետք կամ համարյա անպետք տեխնիկայով, տնտեսական ու աշխատանքի հին մանր-գյուղացիական անհատական ձևերով...»:

Ցեվ այնուհետև.

«Այստեղից՝ գյուղատնտեսական մթերքների ապրանքային յելունքի պակասը: Այստեղից՝ քաղաքի ու գյուղի միջև, արդյունաբերության ու գյուղատնտեսության միջև խզում առաջանալու վտանգը: Այստեղից՝ գյուղատնտեսությունը թափ հաղորդելու, նրան մեր ինդուստրիայի զարգացման տեմպին հասցնելու անհրաժեշտությունը: Ցեվ ահա, վորպեսզի այդ խզման վտանգը չլինի, հարկավոր է սկսել լրջորեն վերազինել գյուղատնտեսությունը նոր տեխնիկայի բազայի վրա... Հարկավոր է գյուղացիական մանր տնտեսություններն աստիճանաբար փոխադրել խոշոր կոլեկտիվ արտադրության բազայի վրա, վորովհետև միայն հանրային տիպի խոշոր արտադրությունն է ընդունակ ամբողջ թափով ոգտագործելու գիտության ու նոր տեխնիկայի տվյալները և յոթ-մղոնանոց քայլերով առաջ շարժելու մեր գյուղատնտեսության զարգացումը»[1]:

Չնայած բուխարինյան «թեորիական» պրոգնոզին՝ սոցիալիզմի մեջ կուլակի խաղաղ ներաճման մասին, իրական կուլակը մեր գյուղում շարունակում եր իր գաղրելի աշխատանքը: Հաշվի առնելով պետության՝ հացի հարաճուն պահանջը՝ կուլակը պահանջեց հացի գների բարձրացում և հայտարարեց պետական մթերքների տարոտաժ: Գյուղում կուլակային տարրերն ամեն կերպ ձգտում եյին ներդրավել այդ տարոտաժի և հացի սպեկուլացիայի մեջ գյուղացիության միջակ մասսաներին: Կուլակությունը հանդես յեկավ վորպես մի ուժ, վորը ձգտում եր վիժեցնել յերկրի սոցիալիստական ինդուստրացումը:

Մենք գիտենք, թե ի՛նչպես պատասխանեց սրան բանվոր դասակարգի դիկտատուրան, թե ինչպես պատասխանեց մեր կուսակցությունն ընկեր Ստալինի ամրակուռ ղեկավարությամբ:

---

1 Ստալին, Լենինիզմի հարցերը, Հայկուսհրատ, 1935 թ., եջ 333—334:

գուլակության սարոտաժը կոտրվեց արտակարգ միջոցների ողնությամբ, չքավորների ու միջակների կազմակերպման ողնությամբ: Այս հողի վրա ուժեղացավ չքավոր ու միջակ մասսաների համախմբումը կուսակցության և խորհրդային իշխանության շուրջը: Հացամթերումների շուրջը մղված դասակարգային կռիվը, կուլակին հասցրած հարվածն արագացրին այն մեծ շարժումը, որը նախապատրաստված եր մեր կուսակցության՝ գյուղում վարած ամբողջ նախընթաց իմաստուն քաղաքականությամբ,— շարժումը հոգուտ համատարած կոլեկտիվացման: Սրա հիման վրա 1929 թվի վերջում մեր կուսակցությունը սահմանափակման հին քաղաքականությունից անցավ կուլակության վորպես դասակարգի վերացման նոր քաղաքականությանը՝ համատարած կոլեկտիվացման բազայի վրա:

* * *

Կոլեկտիվացման հիմունքներով գյուղատնտեսության վերակառուցումը դուրս քաշեց կապիտալիզմի ամենախոր արմատները, որովհետև խորհրդային պետության ղեկավարած սոցիալիստական կոլտնտեսային գյուղը բացառում է կապիտալիստական տարրերի դոյացման և աճման հնարավորությունը: Կոլեկտիվացումն ողնեց արագորեն լուծելու հատիկային պրոբլեմը և ընդարձակելու տեխնիկական կուլտուրաների ցանքային տարածությունները: Այսպիսով, յերկիրն ստացավ ինդուստրացման արագ տեմպերի համար անհրաժեշտ հումք ու պարենային բազա:

Առաջին ու յերկրորդ հնգամյակների ժամանակաշրջանում սոցիալիստական ինդուստրացումն ու կոլեկտիվացումը փոխեցին մեր յերկրի դեմքը, վերածելով նրան հզոր ինդուստրիալ սոցիալիստական պետության, որն ընդունակ է կործանիչ հակահարված տալու ամեն մի պետության կողմից յեկող զինված հարձակմանը: Վո՛ր քան մեծ հերոսություն ցուցաբերեցին կուսակցական և անկուսակցական բոլշևիկները և բանվորների ու կոլտնտեսականների ամենալայն մասսաները սոցիալիստական ինդուստրացման գործում: Մարդկանց ենչպիսի նոր սերունդ դաստիարակվեց դասակարգային թշնամու և նրա գործակալության դեմ մղած կատաղի կռվում առաջին ու յերկրորդ հնգամյակների տարիներում:

Սոցիալիզմի մեջ կուլակի ներառման՝ Բուխարինի ստեղծած

հակահեղափոխական «Թեորիան» ուժգին քարոզվում էր նրա ամենաազդեցիկ դպրոցների կողմից՝ Սլեպկովի, Զայցևի, Այխենվալդի, Մարեցկու և ուրիշ գարշելիների կողմից:

Սոցիալիզմի մեջ կուլակի ներաճման «Թեորիան» թեավորում էր կուլակությանը: Ձի՞ վոր կուլակը հենց այնտեղ միայն ուզում, վորպեսզի նրան թույլ տային խաղաղ կերպով իր շահագործողական տնտեսությունը զարգացնելու, չքավորներին ճնշելու, իրենց շոշափուկներով կոոպերացիան, պետական վարկի սիստեմը և այլն խճճելու, այսինքն սոցիալիստական տնտեսության մեջ «ներաճելու»:

Սոցիալիզմի մեջ կուլակի ներաճման «Թեորիան» իդեոլոգիական պատյան էր այն աջ պրակտիկայի, վորի դեմ կուսակցությունն անդուլ կռիվ էր մղել:

Բեկման մոմենտին, հերոսական հնգամյակների նախորյակին, յերբ կուսակցությունն ինդուստրացման ու կոլեկտիվացման համար մղելիք վճռողական մարտերից առաջ մոբիլիզացիայի յեր յենթարկվում, աջ ոպորտունիստները Բուխարինի, Ռիկովի և Տոմսկու գլխավորությամբ առաջ քաշեցին գործողությունների իրենց ծրագիրը, վորը հիմնված էր նրանց Թեորիայի վրա: Նրանք բացահայտորեն հանդես յեկան ի պաշտպանություն կուլակի, սպառնալով, վոր այլապես յերկիրն առանց հացի կմնա: Նրանք պահանջեցին հացի դները բարձրացնել ի հաճույս կուլակների: Այս նպատակներով նրանք առաջարկում եյին կրճատել ներդրումները սոցիալիստական ինդուստրիայի մեջ:

Ընդսմին նրանք հայտարարում եյին, վոր կոլեկտիվացումը հարկավոր չէ, վորովհետև նա մեծ միջոցներ է պահանջում, իսկ կոլտնտեսություններն ավելի հաց չեն տա, քան այն կարելի յե կուլակից ստանալ: Նրանք սվիններով ընդունեցին կոնտրակտացիան, ՄՏԿ ծավալումը, դյուղացիության հետ հաստատելիք արտադրական զուգման նոր մեթոդները: Նրանք առաջարկում եյին կրճատել սոցիալիստական ինդուստրացումը, հարմարեցնել նրա թափը մանր դյուղացիական տնտեսության զարգացման կրիայի տեմպերին և ամբողջովին հանձնվել կուլակի վոգորմածությանը:

Սա՝ մեր յերկրում կապիտալիզմի վերականգնման և թշնամի կապիտալիստական շրջապատման առաջ մեր յերկրի դինաթափման ավարտված ծրագիրն էր: Այս ծրագրի իրականացումը կբհասցներ կապիտալիստական տարրերի վոչ միայն արագ աշխու-

ժամանակը յերկրի ներսում և սոցիալիստական ինդուստրիայի անկմանը, այլ և զինված ինտերվենցիային՝ դրսից։

Աջերի ռեստավրատորական ծրագիրը սոցիալիզմի բոլոր նվաճումները մեր յերկրում հանձնում եր իր և ոտարերկրյա կապիտալիստների հեղեղին ու ավազակությանը։ Այդ սոցիալիստական հայրենիքի դավաճանության ծրագիրն եր։ Ահա թե ինչ եր թաղնվում դասակարգային պայքարի «մարման» և «սոցիալիզմի մեջ կուլակի ներքաշման» հակահեղափոխական շաղակրատանքի հետևում։

Աջ դավաճանների զազրելի թեորիայի և պրակտիկայի մերկացման պատմական ծառայությունը պատկանում է ընկեր Ստալինին։

Ընկեր Ստալինը ցույց տվեց, վոր սոցիալիզմի մեջ կուլակի ներքաշման բուխարինյան թեորիան—դա բուրժուական-լիբերալ թեորիա յե՝ ուղղված դասակարգային պայքարի լենինյան ուսմունքի դեմ։

Ընկեր Ստալինը վեր բարձրացրեց պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում մղվող դասակարգային կռվի լենինյան թեորիայի մարտական դրոշակը։ Նա մատնանշեց, վոր դասակարգերի պայքարի մարքսիստական-լենինյան թեորիան «հենց նրանով է լավ, իմիջի այլոց, վոր նա հեշտացնում է բանվոր դասակարգի մոբիլիզացիան պրոլետարիատի դիկտատուրայի թշնամիների դեմ»[1]։

Ստալինյան անխնա ու սուր վերլուծության սայրի ներքո հայտարերվեց բուխարինյան թեորիայի կուլակային, սոցիալիզմին թշնամի, աշխատավորներին թշնամի եյությունը։

Ընկեր Ստալինը մերկացրեց կուլակին աջակցող այդ թեորիայի սպասարկու դերը։

Նա ասում եր, քննադատելով Բուխարինին.

«Մահացող դասակարգերը դիմադրում են վո՛չ թե այն պատճառով, վոր նրանք ավելի ուժեղ են դարձել, քան մենք, այլ այն պատճառով, վոր սոցիալիզմն ավելի արագ է աճում, քան նրանք, և նրանք ավելի թույլ են դառնում, քան մենք։ Ցավ հենց այն պատճառով, վոր նրանք ավելի թույլ են դառնում, նրանք զրկում են իրենց գոյության վեր-

---

[1] Ստալին, Լենինիզմի հարցերը, Հայկուսհրատ, 1935 թ., եջ 325։

ջին որերը և հարկադրված են դիմադրելու բոլոր ուժերով, բոլոր միջոցներով։

Ահա թե վորն է դասակարգային կռվի սրման ու կապիտալիստների դիմադրության մեխանիկան տվյալ պատմական մոմենտում»[1]։

Այնուհետև ընկեր Ստալինը մատնանշում ե.

«Պատմության մեջ դեռևս չեն յեղել այնպիսի դեպքեր, վոր մեռնող դասակարգերը հոժարակամ հեռանան բեմից։ Պատմության մեջ դեռևս չեն յեղել այնպիսի դեպքեր, վոր մահացող բուրժուազիան իր գոյությունը պաշտպանելու համար չփորձի իր ուժերի բոլոր մնացորդները»[2]։

Կուսակցության կենտրոնական կոմիտեն իր վորոշումներով ու նամակներով կուսակցական կազմակերպություններին բազմիցս նախազգուշացրել ե քաղաքական բարեհոգությունից ու քաղքենիական բերանբացությունից։

Մի անգամ չե, վոր ընկեր Ստալինն իր յելույթներում մատնանշել ե զգոնությունն ուժեղացնելու անհրաժեշտությունը, ինքնահոսի վրա ամեն մի հույս դնելու արտակարգ վնասը։ Բայց այս ազդանշաններն ու նախազգուշացումները վատ եյին յուրացվում կուսակցական շատ ընկերների կողմից, և նրանք քաղաքականապես կարճատեսներ դուրս յեկան ժողովրդի թշնամիներին—տրոցկիստների և աջ հերձվածողներին—վնասարար ու լրտեսային-դիվերսիոն աշխատանքի առաջ։ Տվյալ յերևույթն ամենից առաջ նրանով ե բացատրվում, վոր կուսակցական այդ ընկերները տարվեցին տնտեսական հաջողություններով, մոռացան խոշոր-բազուկ քաղաքական հարցերի մասին՝ կապիտալիստական շրջապատման, տրոցկիզմի և աջերի եվոլուցիայի, դասակարգային կռվի մասին և այլն։

Ընկեր Ստալինը ԿԿ-ի վերջին պլենումում իր «Կուսակցական աշխատանքի թերությունների և տրոցկիստական ու այլ յերկերեսանիներին լիկվիդացիայի յենթարկելու միջոցառումների մասին» զեկուցման մեջ բաց արեց բոլոր թշնամի տարրերի տակտիկան և ցույց տվեց կոմունիստների մեջ գոյություն ունեցող

---

[1] Ստալին, Լենինիզմի հարցերը, Հայկուս. հրատ., 35 թ., էջ 324.։
[2] Նույն տեղը։

քաղաքական անհոգության պատճառներն ու արմատները, մերկացրեց ժողովրդի թշնամիների դեմ ուղղված հաջող կռվին արգելք հանդիսացող նեխված թեորիաները:

«Անհրաժեշտ է,—ասել է ընկեր Ստալինը,—ջախջախել և դեն դցել այն նեխված թեորիան, թե մեր յուրաքանչյուր առաջխաղացումով դասակարգային կռիվը մեղանում պետք է, իբր թե, ավելի ու ավելի մարի, թե մեր հաջողություններին զուգընթաց, դասակարգային թշնամին, իբր թե, ավելի ու ավելի ձեռնասուն է դառնում:

Դա վոչ միայն նեխված թեորիա յե, այլ և վտանգավոր թեորիա յե, վորովհետև այն քնեցնում է մեր մարդկանց, թակարդի մեջ է դցում նրանց, իսկ դասակարգային թշնամուն հնարավորություն է տալիս կազդուրվելու՝ խորհրդային իշխանության դեմ կռիվ մղելու համար:

Ընդհակառակը, վորքան ավելի առաջ ընթանանք, վորքան ավելի մեծ հաջողություններ ունենանք, այնքան ավելի դաղաղելու յեն ջախջախված շահագործողական դասակարգերի մնացորդները, այնքան ավելի շուտ պետք է դիմեն նրանք կռվի ավելի սուր ձևերի, այնքան ավելի վատություն են անելու նրանք խորհրդային պետությանը, այնքան ավելի կառչելու յեն պայքարի ամենահուսահատ միջոցներին, վորպես դատապարտվածների վերջին միջոցների:

Պետք է նկատի ունենալ, վոր ջախջախված դասակարգերի մնացորդները ԽՍՀՄ-ում միայնակ չեն: Նրանք ուլդակի ոժանդակություն ունեն ԽՍՀՄ-ի սահմաններից դուրս գտնվող մեր թշնամիներից: Սխալ կլիներ կարծել, թե դասակարգային կռվի վոլորտը սահմանափակված է ԽՍՀՄ-ի սահմաններով: Եթե դասակարգային կռվի մի ծայրը դրծում է ԽՍՀՄ-ի շրջանակներում, ապա նրա մյուս ծայրը ձգվում, հասնում է մեզ շրջապատող բուրժուական պետությունների սահմանները: Այդ չեն կարող չդիտենալ ջախջախված դասակարգերի մնացորդները: Եվ հենց այն պատճառով, վոր նրանք դիտեն այդ, նրանք այնուհետև էլ շարունակելու յեն իրենց հուսահատ վտանգությունները:

Այդ է սովորեցնում մեզ պատմությունը: Այդ է սովորեցնում մեզ լենինիզմը:

Անհրաժեշտ է այդ բոլորը հիշել և դդաստ լինել»:

* * *

Մեծ են սոցիալիզմի հաղթանակները մեր յերկրում։ Չկան արդեն մեր յերկրում կապիտալիստներ, վո՛չ փոքրեր, վո՛չ էլ մեծեր, չկա արդեն նաև հող նրանց առաջանալու և աճելու համար։ Բանվոր դասակարգը, խորհրդային գյուղացիությունն ու աշխատավոր ինտելիգենցիան համախմբվել ու մերձեցել են միմյանց ինչպես յերբեք առաջներում։ Ստալինյան Սահմանադրությունը բաց է անում բանվոր դասակարգի դիկտատուրայի նոր ժամանակաշրջան, խորհրդային սոցիալիստական դեմոկրատիայի ծաղկման ժամանակաշրջանը։ Նոր Սահմանադրությունը վերացրեց իրավական այն բոլոր սահմանափակումները, վորոնք առաջ կիրառվում եյին բնակչության վորոշ կատեգորիաների նկատմամբ։ Խորհրդային դեմոկրատիայի այս ծաղկումն արոցկիստների, աջ և այլ դավաճանների դեմ կուսակցության մղած անխնա վրվի արդյունքն է։

Սոցիալիզմին թշնամի տարրերն արդեն սոցիալական հող չունեն մեր յերկրում։ Նրանք չեն կարող հենվել ԽՍՀՄ-ի բնակչության խավերից վոչ մեկի վրա։ Նրանց բնական բազան—կուլակությունն ու քաղաքային բուրժուազիան—հողմացրիվ է արված։ Բայց այս չի նշանակում, թե թշնամիները դադարել են գոյություն ունենալուց։ Ինչպես և կանխատեսում եր. ընկեր Ստալինը, մեր հաջողությունները նրանց դիմադրությունը դարձնում են ե՛լ ավելի կատաղի,—և չկա այնպիսի մի դավաճանություն, չկա այնպիսի մի գարշելիություն, վորին նրանք ընդունակ չլինեին դիմելու հաղթական սոցիալիզմի դեմ մղած կռվում։ Ցեվ ինքնահոսի ու դասակարգային կռվից հրաժարվելու աջ-ոպորտունիստական թեորիայի թունավոր սերմը դեռ մեծ վնաս կարող է հասցնել սոցիալիստական շինարարության պրակտիկային։ Այստեղից է բղխում մեր կուսակցության անդամներին հեղափոխական զգաստության և քաղաքական աչալրջության վոգով դաստիարակելու անհրաժեշտությունը։

Պատմությունը մեզ ցույց է տալիս, վոր հակահեղափոխականները յերբեք չեն քաշվել դաշինք կնքելու ոտարերկրյա ինտերվենտների հետ իրենց նպատակներին հասնելու համար։ Բայց դեռ չի յեղել ավելի զզվելի դավաճանություն, քան այն, վորը կատարեցին արոցկիստներն ու կապիտալիզմի աջ ռեստավրատորները մեր յերկրում. յերկրի ներսում հող չունենալով՝ նրանք

չհրաժարվեցին իրենց մտադրությունից և ծառայության մտա
ֆաշիզմի մոտ, դավաճանելով սոցիալիստական հայրենիքին:

Չի կարելի մոռացության տալ, որ մենք հարևան ենք ֆաշիստական յերկիրներին—պատերազմի ոջախներին: Չի կարելի մոռանալ, որ ֆաշիստական բուրժուազիան վոչ մի միջոց չի խնայում, վոչ մի արդելքի առաջ կանգ չի առնում, վորպեսզի մեր ժողովրդին դաղութային շահագործման որյեկտի վերածի: Բայց չկա մի այնպիսի ուժ, վորը կարողանար խորտակել մեր հրաշալի հայրենիքն ու Լենինի–Ստալինի մեծ կուսակցությունը: Այնքան ավելի խորն է մեր ատելությունը դեպի անարդ ֆաշիստական բանդիտները՝ տրոցկիստներն ու աջ հերձվածողները, այնքան ավելի սուր է հեղափոխական զգոնությունը բարձրացնելու անհրաժեշտությունը:

„Правда“ 3 հունիսի 1937 թ.

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԻՊԱՐԱՆ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գր
FL0001247

գինը 16 կոպ.
370
054.
ЦЕНА
16 к.
№ 24870

ДАВ. ЛУРЬЕ

ПРАВЫЕ ОТЩЕПЕНЦЫ И ИХ ТЕОРИЯ „ВРАСТАНИЯ КУЛАКА В СОЦИАЛИЗМ“

Армпартиздат. Ереван, 1937